

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

52) Матеріалы по вопросу о фальсификаціи пищевыхъ продуктовъ съ приложеніемъ законопроекта. Одесса, 1901 г., цѣна 2 руб. Изд. „Вѣстника Винодѣлія“.

Քաղաքակրթութեան հետ ձեռք ձեռքի տուած զարգացում է մանաւանդ աննդառութեան համար գործ ածուող արդիւնքների կեղծումը կամ ֆալսիֆիկացիան: Մեծ քաղաքների շուկաներում, օրինակ, դժուար է ձարել մաքուր, բնական գինի, կաթ, մեղր եւ այլն, որովհետեւ վաճառականը գերադասում է աւելի մեծ շահ ստանալ՝ սպառողներին ծախելով իր վրայ աւելի աժան նստող կեղծած արդիւնքները, քան զրանց իսկականները:

Մանդատու արդիւնքների կեղծումը յաճախ կարող է նոյն իսկ անփնտռ լինել սպառողների առողջութեան համար, քայքայել նայած դրան, ֆալսիֆիկացիան մեծ հարուած է հասցնում բնական կամ մաքուր արդիւնքներ պատրաստողներին, որոնք անկարող են իրանց ապրանքը, կեղծածների նման, աժան ծախել: Անկարող լինելով մրցել կեղծ ապրանքներ ծախողների հետ, արդիւնաբերողը ստիպուած է լինում աւելի նուազ չափերով զարգացնել իր տնտեսութիւնը: Օրինակ, եթէ վաճառականը իսկական մեղրի փոխարէն գերադասում է ծախել զանազան աժան ու անփնտռ նիւթերից պատրաստած արուեստական մեղր, դրանով, ի հարկէ, նա փնտռ է հասցնում երկրի մեղուապահութեան, որովհետեւ շուկայում իսկական մեղրի պահանջի մի մասը լրացւում է մի ինչ-որ արուեստական քաղցրը զանգուածով. հետեւաբար, մեղուապահը պէտք է աւելի նուազ չափերով արդիւնաբերի:

Պարզ է, ուրեմն, որ ֆալսիֆիկացիայի հարցը միայն ժողովրդի առողջապահութիւնը չէ չօշափում, այլ և նշանակութիւն ունի նրա տնտեսութեան կանոնաւոր զարգացման տեսակէտից. մինչդեռ հարցի այդ կողմի վրայ ուշադրութիւն

չէ դարձնում գոյութիւն ունեցող օրէնքը, որ պատիժ է սահմանում միայն՝ սպառողի առողջութեան վնասող ֆալսիֆիկացիաների համար: Այսպէս է Ռուսաստանում: Իսկ Արևմտեան Եւրոպայում վերջին քսան տարիների ընթացքում թէ կառավարութիւնները և թէ հասարակական զանազան հաստատութիւնները մեծ եռանդով սկսել են մաքառել ժամանակակից առևտրի ստեղծած այդ չարիքի—ֆալսիֆիկացիայի դէմ:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռուսաստանում դեռ շատ քիչ բան է արուած այդ չարիքի դէմ մաքառելու գործում, «Вѣстникъ Винодѣлія» ամսագրի խմբագիր Վասիլի Թայրովը (հայ) ձեռնամուխ է եղել մամուլի միջոցով բաղմակողմանի քննութեան և լուսարանութեան ենթարկել ֆալսիֆիկացիայի հարցը և նրա դէմ ձեռք առնելիք միջոցները: Նրա հրատարակած «Նիւթերի» մէջ բերուած են այդ հարցի վերաբերեալ զանազան մասնագէտների կարծիքներ, յիշատակուած են զանազան հասարակական հիմնարկութիւնների կողմից ձեռք առած միջոցները և տեսութիւններ են արուած եւրոպական երկրներում ֆալսիֆիկացիայի դէմ գործ դնուող օրէնքների և միջոցների մասին: Մի խօսքով, այդ գրքի մէջ ի մի են ժողովուած կեղծման հարցին վերաբերեալ առատ և բաղմակողմանի նիւթեր: Այդ նիւթերի ուսումնասիրութեան վրայ հիմնուելով, պ. Թայրովը առաջարկում է՝ սննդատու արդիւնքների կեղծման վերաբերեալ մի օրինագիծ, բացատրողական գրութեամբ հանդերձ:

Մեզ լուծւած է, որ բացի օրէնքների, պետական ու հասարակական վերահսկողութեան և վաճառող ապրանքների լաբօրատորիական քննութեան՝ կայ մի միջոց էլ ֆալսիֆիկացիայի դէմ կռուելու համար, որի մասին ոչինչ չէ ասուած յիշած «Նիւթերում»: Մենք մի անգամ արդէն առիթ ենք ունեցել յիշել *), որ սպառողական ընկերակցութիւնների բացուած խանութները լաւ միջոց են կեղծած ապրանքները շուկայից վերացնելու:

Սպառողական ընկերակցութիւնները գնելով ապրանքներ առաջին ձեռքից, արդիւնաբերողներից, դրանով այս վերջիններիս պաշտպանում են կեղծ ապրանքներ պատրաստողների մրցումից: Հետևաբար, կօօպերատիւ գաղափարի լայն տարածումը ժողովրդի մէջ և ընկերակցութիւնների զարգացումը ոչ պակաս դրական միջոց կարող են համարուել ֆալսիֆիկացիայի դէմ մաքառելու, քան օրէնսդրական մանրակրկիտ բեղումնա-

*) Համեմատի՛ր «Մուրճ» № 6, երես 206:

դացիան, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ շատ քիչ սպառողներ կը գտնուեն, որոնք «հաւաս» ունենան իրանց ենթարկել դատաստանական քաջքշուկների մի քանի ֆունտ կամ չիլ կեղծած ապրանքների համար...

Սակայն մինչև որ կօօպերատիւ շարժումը բաւականաչափ տարածուի ժողովրդի մէջ—անհրաժեշտ է այս «նիւթերի» մէջ յիշած միջոցներով սանձահարել մեր միջնորդ առևտրականների խարդախասիրութիւնը: Ուրեմն պէտք է շնորհակալութեամբ ընդունել պ. Թայրօլի նախաձեռնութեամբ և ջանքերով զլուխ բերած այդ լուրջ հրատարակութիւնը, որից թէ կառավարութիւնը և թէ հասարակական հիմնարկութիւնները կարող են լիակատար գաղափար կազմել ֆալսիֆիկացիայի հարցի մասին և հնարաւորութիւն ունեն ընտրել կեղծման դէմ մեր պայմաններում աւելի մեծ դիւրութեամբ գործադրելի միջոցները:

Լ. Ս.

53) А. АЛАВЕРДЯНЦЪ. „Кончина А. С. Грибоѣдова по армянскимъ источникамъ“. Спб., 1901.

1891 թուականին հրատարակուեց Գալուստ Շերմազանեանի «նիւթեր հայոց պատմութեան համար» գիրքը: Շերմազանեան մի շատ հետաքրքրական տիպ է մեր գրականութեան մէջ: Ներսիսեան դպրոցի առաջին սաներից մէկը, նա վաճառական էր, բայց շատ սիրում էր գրականութիւնը և ունի բաւական գրութեանքներ: Սիրում էր նա մանաւանդ պատմութիւնը և հաւաքում էր պատմական նիւթեր: Պարսկաստանում վաճառականութիւն անելիս, հաւաքել է տեղեկութիւններ՝ այնտեղ մեծ պաշտօնների հասած հայերի մասին: Այս տեղեկութիւններից էլ նա կազմել է իր «նիւթերը»: Այդ գրքի մի գլուխը, որ խօսում է Միրզա-Նազուր անունով ներքինացրած հայի մասին, թարգմանել է պ. Այսովերդեանց և տպագրել «Русская Старица» ամսագրում, որտեղից և արտատպել է այժմ:

Շերմազանեանը իր գրքի մէջ տալիս է զանազան տեղեկական արդիւնեց պատմութեանը: զրանք աւանդութիւններ են, բերանացի պատմութիւններ, որոնք, ինչպէս յայտնի է, մի յայտնի չափով միայն կարող են պատմական նիւթ համարուել: Ահա այդ աւանդութիւններից մէկն է և Միրզա-Նազուրի պատմութիւնը: